Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, գիտ. նախագահ
Ն. Խ. Մարիբեկյան
«23» 12 2017թ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
## ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

### I. Ընդհանուր դրույթներ

1.1 Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետ Համալսարան) ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը գործում է համաձայն համալսարանի կանոնադրության: Համալսարանի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատն իր լիազորությունների սահմաններում քննարկում է Համալսարանում գործունեության բոլոր ոլորտներին վերաբերվող հարցերը, կառավարման և գիտական խորհուրդների որոշումների կատարման ընթացքը:

1.2 Ռեկտորատի կազմի մեջ մտնում են՝ ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, դեկանները, ուսումնական մասի վարիչը, գլխավոր հաշվապահը, որակի ապահովման բաժնի վարիչը, արտաքին կապերի բաժնի վարիչը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչը, տնտեսական մասի վարիչը: Ռեկտորատի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

1.3 Կանոնակարգը ընդունվում և փոփոխվում է Ավանդական բժշկության համալսարանի գիտական խորհրդի կողմից:

1.4 Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ռեկտորի կողմից սահմանված ժամկետներում և համապատասխան օրակարգով:

### II. Ռեկտորատի աշխատակարգը

2.1. Ռեկտորատի նիստերը նախագահում է ռեկտորը:

2.2. Ռեկտորը, բացելով ռեկտորատի նիստը, հայտարարում է նիստի օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը:

2.3. Ռեկորատում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

2.4. Ռեկտորատի նիստերն արձանագրվում են: Արձանագրության վարումը կազմակերպում է ռեկտորատի քարտուղարը:

## III. Ռեկտորատի իրավասությունը

3.1. Ռեկտորատի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում հրավիրվում է արտահերթ նիստեր: Ռեկտորատի նիստերի արձանագրությունները ստորագրում են ռեկտորը և ռեկտորատի քարտուղարը:

3.2. Ռեկտորի հանձնարարությամբ պարբերաբար ստուգվում են ռեկտորատի որոշումների կատարման ընթացքը և արդյունքները քննարկվում են ռեկտորատի նիստերում:

3.3. Ռեկտորատն իր նիստերում՝

3.3.1. Հաստատում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլանները:

3.3.2. Քննարկում է ինչպես պլանավորված, այնպես էլ ընթացիկ և հրատապ այլ բնույթի հարցեր:

3.3.3. Քննարկում և որոշումներ է ընդունում ուսումնամեթոդական, գիտական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ հարցերի վերաբերյալ:

3.3.4. Քննարկում է ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները:

3.3.5. Քննարկվում է ուսանողների և աշխատակիցների դիմումները, զեկուցագրերը և և ընդունում համապատասխան որոշումներ:

3.4. Ուսումնական գործընթացի կազմակերպման և կատարելագործման հետ կապված հարցերով:

3.5. Քննարկում է Համալսարանի հաստիքային, կառուցվածքային փոփոխություններ կատարելու հարցերը:

3.6. Գիտաժողովների և սեմինարների կազմակերպման և անցկացման, այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության հարցեր:

3.7. Քննարկում և որոշումներ է ընդունում ուսանողների հեռացման և վերականգնման, ուսման վարձի չափի սահմանման և փոփոխման հարցերի վերաբերյալ:

3.8. Հաստատում է ռեկտորատի աշխատակարգը:

## IV. Ռեկտորատի որոշումները

4.1. Ռեկտորատի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են դրվել ռեկտորի ընդունած որոշումների, հրամանների հիմքում:

4.2. Համալսարանի կառավարման վերաբերյալ որոշումները հաստատվում են գիտական խորհրդի նիստերում: